Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(հարկիրճ շարադրանք)[1]

1. ՈԼՈՐՏԸ

Գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցումը, գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրումն: Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում պետական կառավարման և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքների, պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների հայեցակարգերի և ծրագրերի մշակման և վերահսկման աշխատանքների իրականացում, սահմանված կարգով գեոդեզիական և քարտեզագրական գործունեության վերահսկողություն իրականացնում. ՀՀ և երկրագնդի մնացած տարածքների գեոդեզիական, տեղագրական և քարտեզագրական տվյալների բանկի կառավարման իրականացնում, գեոդեզիական և քարտեզագրական գործունեության սուբյեկտներին ամբողջական տեղեկությունների տրամադրում իրենց առնչվող տարածքների գեոդեզիական և քարտեզագրական ուսումնասիրվածության մասին, պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների նախագծային փաստաթղթերի հաստատում է, ՀՀ տարածքի գեոդեզիական կետերի և վարչատարածքային միավորների սահմանանիշերի հաշվառման իրականացնում, պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացնում:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հասարակության տեղեկատվական պահանջները բավարարելու նպատակով կոմիտեն 2025-2027 թվականների զարգացման ընթացքում ամբողջապես կփորձի անցնելու առցանց ծառայությունների ինքնաշխատ համակարգի՝ հրաժարվելով թղթային փաստաթղթաշրջառանությունից: Համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով կիրականացվեն կառուցվածքային բարեփոխումներ, որի ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքներն առցանց, ինքնաշխատ, անթուղթ անշարժ գույքի կադաստրի ստեղծումն է: ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել թվային արխիվի ամբողջականացում և ընթեռնելիության բաձրացում, ինչը սահմանված է ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 10.6 կետիով:

[1] Ոլորտային քաղաքականության ողջ համառոտ շարադրանքը չպետք է գերազանցի 6 էջի սահմանները:

Անշարժ գույքի գրանցամն գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել սպասարկման գրասենյակների օպտիմալացում ի հաշիվ առցանց մատուցվող ծառայությունների զարգացման և օպտիմալացված գրասենյակների փոխարեն խորհրդատվական կենտրոնների ստեղծում, ինչի արդյունքում հնարավոր կլինի աշխատանքային ռեսուրսների արդյունավետության բարձրացում և Կադաստրի կոմիտեի համակարգի պահպանման ծախսերի կրճատում, սպասարկման որակի բարելավում և աշխարհագրության ընդլայնում՝ ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 12.2 կետին համապատասխան

Բարեփոխումներ են իրականացվել նաև գույքի շուկայական գնահատման ոլորտում, մասնավորապես օրենսդրական փոփոխություններով կարգավորվել են ոչ միայն անշարժ գույքի, այլ նաև շարժական գույքի շուկայական գնահատումները:

Անշարժ գույքի շուկայի բարելավման և զարգացման նպատակով անշարժ գույքի գործակալների (բրոքերների) գործունեությունը կարգավորող ոլորտի օրենսդրական դաշտի ձևավորումից բխող ոլորտին անհրաժեշտ գործիքակազմի ներդրում՝ ծրագրային ապահովում անշարժ գույքի գործակալների համար տեղեկատվական բազային համակարգի ստեղծում, ավտոմատացված համակարգի ներդրում (ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 13.2 կետ):

Աշխատանքները շարունակվում են նաև հանրապետության հասցեների վերջնական բազան ամբողջական և ավարտուն տեսքի բերելու ուղղությամբ:

Ռազմավարության պահանջների խթանումը գեոդեզիական, քարտեզագրական և երկրատեղեկատվական համակարգի հիման վրա ՀՀ ինտեգրված, միասնական կադաստրի ստեղծումն է: Ստեղծված քարտեզագեոդեզիական հիմքով երկրատեղեկատվական համակարգը հանդիսանալու է գերատեսչական տարբեր ոլորտների և առանձին տարածքների զարգացման ու արդյունավետ պլանավորման համար՝ որպես բազա: 2025-2027 թվականների ընթացքում նախատեսվում է իրականացնել ծրագրային ապահովում բազային և թեմատիկ շերտերի մոդուլների, ազգային գեոպորտալի գործարկման և դրանց հասանելիության աստիճանակարգի սահմանում՝ ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 1.3 կետով սահմանված:

Գեոդեզիայի ու քարտեզագրության բնագավառի զարգացման նպատակով 2025-2027 թվականների ընթացքում նախատեսվում է շարունակել իրականացնել երկրատեղեկատվական համակարգում Հայաստանի Հանրապետության

բնակավայրերի քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքները՝ ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 3.2 կետով սահմանված, ՀՀ օրթոֆոտոհատակագծերով ամբողջությամբ ծածկված համայնքների ճշգրտված կադաստրային թաղամասերի հատակագծերը, կադաստրային քարտեզում չտեղադրված գույքերի նույնականացումն ու դաշտային հանութագրման աշխատանքները՝ ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 4.2 կետով սահմանված, և ՀՀ համայնքների կադաստրային թաղամասերի ուղղման նպատակով լրացուցիչ կետերի դիտարկման և թաղամասերի արտաքին սահմանների ամբողջական ուղղման աշխատանքները՝ ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 4.3 կետով սահմանված: ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել առկա բարձրունքային մոդելի ճշտության բարձրացման համար նոր կետերի տեղադրման, հանութագրման և տվյալների ամբողջական մշակման աշխատանքներ՝ ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 8.1 կետին համապատասխան:

ՄԺԾԾ ժամանակահատվածում կիրականացվեն նոր ձևաչափով՝ տպագիր, բազմալեզու, ինչպես նաև համացանցում տեղադրված հնարավորությամբ ատլասների տպագրման աշխատանքները՝ ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 7.1 կետին համապատասխան:

ՄԺԾԾ ժամանակահատվածում երկրակեղևի ուղղահայաց շարժումներն ուսումնասիրելու նպատակով նախատեսվում է իրականացնել I դասի նիվելիրացման աշխատանքներ սեյսմաակտիվ երկրակեղևի գործող խզվացքային շրջանում, թարմացնելու նախկինում կատարված նիվելիրացման տվյալներն ու ցանցը և ստանալ հիմնակետերի բաձարձակ բարձրությունները: Կրկնակի նիվելիրացման աշխատանքների իրականացումը հիմնավորվում է I, II, III և IV դասերի նիվելիրացման հրահանգի 2.4 կետի վերջին պարբերությամբ՝ Լեռնային շրջաններում կրկնակի նիվելիրացման արդյունքներն օգտագործվում են երկրակեղևի կառուցվածքի ուսումնասիրման, առանձին բլոկների շարժման արագության և ուղղվածության տվյալների ստացման ու երկրակեղևի գործող խզվածքների բացահայտման համար, և 2.9 կետով՝ յուրաքանչյուր 25 տարին մեկ, իսկ սեյսմաակտիվ շրջաններում՝ 15 տարին մեկ նորից նիվելիրացվում են բոլոր I դասի

գծերը: ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 8.1 կետին համապատասխան:

Անշարժ գույքի գրանցման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել գրանցման միասնական ստրաբաժանման ստեղծում, որի արդյունքում կիրականացվի գրանցման և տեղեկատվության տրամադրման, գնահատման, կադաստրային գործերի արխիվի, հաշվառման տվյալների և կադաստրային քարտեզների վարման կենտրոնացում, նիասնական մեթոդաբանության ձևավորում՝ ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 12.1 կետին համապատասխան:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- *Գրանցման միասնական ստորաբաժանման ստեղծման նպատակով վարչական շենքի կապիտալ վերանորոգում*
- *ՀՀ համայնքների կադաստրային թաղամասերի ուղղման նպատակով անհրաժեշտության դեպքում լրացուցիչ կետերի դիտարկում*
- *ՀՀ օրթոֆոտոհատակագծերով ամբողջությամբ ծածկված համայնքների ճշգրտված կադաստրային թաղամասերի հատակագծեր, կադաստրային քարտեզում չտեղադրված գույքերի նույնականացում և դաշտային հանութագրում*
- *Թվային արխիվի ամբողջականացում և ընթեռնելիության բարձրացում*

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Անշարժ գույքի կադաստրի վարման բնագավառում 2025 թվականի պետական քաղաքականության իրականացման ծախսերը կազմում են 6,019,218.6 հազար դրամ, 2026 թվականի ծախսերը հազար դրամ ՝ 5,812,668.2 հազար դրամ, 2027 թվականի ծախսերը՝ 4,311,259.6 հազար դրամ: